

Հարցաշար
Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
10-րդ դասարան
Տևողությունը 180 րոպե

Մի մարդ անխոնջ տքնանքով զօրուգիշեր աշխատեց և վերջապես գնեց իր երազանքի տունը՝ երփնավառ պարտեզով, գեղուղեշ, հուռթի ծառաստանով: Նա անչափ երջանիկ էր: Պարզվեց, սակայն, որ հարևանի հարցում բախտը ամեննին չի բերել: Վերջինս բանասարկու, պղերգ ու նանրամիտ մեկն էր, որն անգործ օրերի պարապությունը լցնում էր միայն անլուր խճբճանքով, մարդկանց կյանքը թունավորելով, նրանց տրամադրությունը փչացնելով:

Այս անգամ թիրախը նորեկ հարևանն էր: Գաղտագողի մտնելով նորատունկ այգին, նախանձի մոլուցքից կուրացած՝ կոտրատում էր դալար ճյուղերը, չարությունից պոկոտում նորաբողբոջ ծաղիկները: Եվ վատն այն էր, որ մարդուն հունից հանելու համար այդ չնչինը յուրաքանչյուր օր նոր ու զազրելի հնարքներ էր որոճում: Պարսավելով նորաբնակ դրացուն՝ աջ ու ձախ տարածում էր, թե նա խաբեբայությամբ և զարտուղի հարստանալով է ձեռք բերել իր տունը: Իսկ նորեկը ծով համբերությամբ օժտված վեհանձն ու ներհուն տղամարդ էր. ի հեճուկս նսեմ դրացու արարքների՝ շարունակում էր մեծահոգաբար լռել:

Մի օր էլ՝ վաղ առավոտյան, մարդը տեսավ, որ իր դարպասի առջև թափոններով լի մի դուլ է դրված: Ինչ խոսք, դժվար չէր կռահել, որ դա հարևանի ձեռքի գործն էր: Հայացքը ուղղելով նրա տան կողմը՝ մարդը խորհմաստ ժպտաց: Ապա ...

1. Գրի՛ր տեքստի վերջաբանը՝ 2-3 նախադասությամբ: (2 միավոր)
2. Գրի՛ր թևավոր խոսք կամ դարձվածք՝ ըստ քո գրած վերջաբանի: (0,5 միավոր)
3. Գրի՛ր *գեղուղեշ, բանասարկու, պղերգ, նանրամիտ, անլուր, խճբճանք, զարտուղի, ներհուն, նսեմ, ի հեճուկս* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Տրված բառերը ենթարկի՛ր բառակազմական վերլուծության՝ նշելով արմատը մեկ, ածանցը՝ երկու գծով. *տքնանք, դրացի, նանրամիտ, խճբճանք, չնչին*: Վերականգնի՛ր հնչյունափոխված արմատները: (2 միավոր)
5. Տեքստից ընտրելով 5 դարձվածք՝ գրի՛ր դրանց հոմանիշ դարձվածքները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (1 միավոր)
6. Բառախմբից առանձնացրո՛ւ այն բառերը, որոնք կարող են հատկանիշ դառնալ **հայացք** գոյականի համար. *խոլական, խառնիճաղանջ, մակաղած, տատամսած, վայելուչ, երևելի, անրջային, բացակա, պազշոտ, դյուրաբորբոք, վարանոտ, ազնվագարմ, անհաղորդ, մտացածին, կարոտաբաղձ, համրընթաց, դեզերող, տաքարյուն, դժնատեսիլ, վայրի*: (1 միավոր)
7. Գրի՛ր *թոթովել, ծխել, դիտել, հատել, հեծել* բառերի հարանուն գույգերը: Կազմի՛ր բառակապակցություն յուրաքանչյուր բառով: (1,5 միավոր)
8. Կազմի՛ր 4 նախադասություն *շնորհք* բառի բազմիմաստություններով: (2 միավոր)
9. Բացատրի՛ր « դելֆինի համար տաշտը խիստ նեղ է» և «առյուծը թիթեռ չի բռնում» թևավոր խոսքերը: (1 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Արվեստի հրաշագործ ուժը » վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)